

ՅԻՄՆԱՄԵԱՅ ՅՈՐԵԼԵԱՆ ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ

ՆԲՈՒՍԱՆՆԵՐԻ Ս. ՊԱՏԵՐԱՐԻ

ԱՄԵՆ. Յ. ԵՂԻՇԷ Ս. ԱՐՔԵՊՍԻ. ԳՈՐԻՇԱՆ

1879 - 1929

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայաստանաց եկեղեցին, իբրեւ կեդրոն հոգեւոր դաստիարակութեանը Հայ ժողովուրդին, իր կատարած դերը կը ցայեցնէ իր ա՛յն հոգեւորականներուն վրայ, որոնք լաւ ըմբռնած են իրենց փարոջական եւ ուսուցչական պատճառներէն բոլոր կողմերը եւ կարող եղած են արդիւնաւորել իրենց աշխատանքը տարիներու ընթացքին:

Ամեն. Գուրեան Սրբազան, զոյս հոգեւորական տեսակէտէն դիտելով, եղած է անլուելի Քարոզիչը Ս. Աւետարանին, չալով իր փարոջելու արուեստին օժուրիւն մը ո՛չ միայն իմաստալից խօսքերով եւ բանաստեղծական խոյանքով, այլեւ հայերէն լեզուին զբաղական գեղեցկութիւնով: Գրագէտը, Բանաստեղծը, Իմաստասէրը, Աւետարանիչը միանալով հոգեւորական Գուրեանի մէջ՝ հանդիսացուցած են զինքն Հայց. եկեղեցւոյ բեմին վրայ լաւագոյն Քարոզիչներէն մէկը: Իբրեւ բանաստեղծ իսկ միշտ Աւետարանը եւ Փրկչին կեանքը եղած է Գուրեան իր երթումներուն մէջ, ուր նոր ներշնչում եւ նոր արտայայտութիւններ առած են աւետարանական դէմքեր ու դրուագներ: Ասկէ զատ Գուրեան Սրբազանի բեմին նկարագիրը եղած է միջակէն վե՛ր բարձրացնել ունկնդրութեան



մակարդակը, եւ ասոր նպաստած են քէ՛ իր յարսեւ Քարոզչութիւնը եւ քէ՛ իր լուսաւորող ուսուցչութիւնը միեւնոյն ասէն, այնպէս որ Աւետարանը արտափայլած է շարունակ իր բեմին վրայ եւ իր գրչին սակ։

Անադարս հաւատարմութիւնը իր սրբազան կոչումին, զոր պահած է իր Քաճանայութեան այս յիսուն տարիներուն մէջ, իր անձին շուրջ շինած է մաքուր հոգեւորականի համբար, եւ իր անշահաւէր ոգին եւ նուիրեալ գործունէութիւնը հայ եկեղեցականի սէմին սակ՝ եղած է զմայելի եւ օրինակելի իրականութիւն մը, զինքը մօտէն նանչցողներուն համար։

Ամեն. Դուրեան Սրբազանի Քաճանայութիւնը այնպէս սերտիւ լծորդուած է իր Ուսուցչութեան հետ որ անկարելի է զատել մէկը միւսէն։

Իբրեւ Վարդապետ Հայց. եկեղեցւոյ, Ան եղած է գերազանցապէս ուսուցիչն ու դաստիարակը, քէ՛ իր բաճանայական ձեռնադրութենէն յառաջ եւ քէ՛ ետքը. ուսուցիչը ինչպէս եկեղեցւոյ սրբազան բեմին, նոյնպէս դպրոցներու դաստիասական արողներուն վրայ, իբրեւ Քարոզիչ-Ուսուցիչ Պատրիարքի մէջ, իբրեւ Վերաշնչուիչ-Վանահայր Արմաշու Դպրեվանքին մէջ, իբրեւ Առաջնորդ-Ուսուցիչ Իզմիրի առաջնորդութեան միջոցին, իբրեւ նախկին Պատրիարք Կ. Պոլսի եւ ուսուցիչ Կ. Պոլսի վարժարաններուն մէջ, եւ այժմ ալ իբրեւ Պատրիարք-Ուսուցիչ Երասաղէմի պատրիարքական արողին վրայ։

Ժամանակակից հայ սերունդին մէջ բազմաթիւ անձեր, աշխարհական քէ եկեղեցական, իրենց մշաւոր եւ հոգեւոր զարգացումին եւ պատրաստութեան աստղաները կը պարսին Ամեն. Դուրեան Սրբազանի ուսուցչական չաղանդին, որ յիսուն տարիներու ընթացքին, անընդհատ ու անխափան ուսումնասիրութեամբ մշակած է իր նախընտրած նիւթերը։

Հայաստանեայց եկեղեցւոյ ծոցին մէջ արգասաւորուած եւ օրհնուած այսպիսի երկարամեայ ծառայութիւն մը, կ'արժէ որ յիշատակուէր հանդիսաւոր առիթով մը, ո՛չ միայն ի ցոյց ազգային արդար գնահատանքի մը, այլեւ ի նախապատիւն շայն եկեղեցւոյ հոգեւորական դասուն։

Այս պարտքը զգացին Ս. Պատրիարք Հօր առակերտները, եւ Ս. Արքայապետ Տեմուր Սահակեան շնորհակալութեան յիշատակով զայն, որոշեց Ն. Ամեն. Սրբազանութեան Քաճանայական Ձեռնադրութեան յիսներորդ տարեդարձին առթիւ յիշատակել իր կէս դարու եկեղեցական ու կրթական ծառայութիւնը եւ յօրելինական հանդէսով մը տօնախմբել զայն։

Այս նպատակով Յօրելինական Կեդրոնական Յանձնաժողով մը

կազմուեցաւ Ս. Արտիս մէջ, որ, Յոբելեանը հռչակելու համար 1929 ին, նշեւեալ կարգադրութիւնները ըրաւ .

Ա. — Հրասարակել հասոր մը 1929 տարւոյ ընթացքին, որ պիտի բովանդակէ Ամեն. Դուռեան Սրբազանի աւակներսներուն, եկեղեցական թէ աշխարհական, բարեկամներուն եւ հիացողներուն զնահասութիւնները, տպաւորութիւնները, յուշիկները, եւայլն . Հասորին սկիզբը պիտի դրուի Ամենապատիւ Յոբելեարին յման կենսագրութիւնը, եւ զործը պիտի պատկերազարդուի իր կեանքին ալ եւայլ հանգրուանները յիշեցնող լուսանկարներով (*).

Բ. — Յոբելեանի յիշատակին կառուցանել Մատենադարանի յատուկ շէնք մը Ս. Յակոբի երչափակին մէջ, ԳՈՒՐԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ անուանով .

Սրոց Յակոբեանց Արտին նշանաւոր պատշարներուն անունն ու յիշատակը անմահացած է մէջ մէկ մեծագործութիւններով .

Դուռեան Սրբազանի պատշարութեան ասեւն է որ մշտնջենական եւ զրական ստոյգ շարժում մը, մշտնջենական մեծագործութիւն մը, իրականութիւն եղաւ այս պատշարական հաստատութեան մէջ, որ չունի սակայն Մատենադարանի պատշարներուն համապատասխանող առանձին շէնք մը . Չեռագիր եւ տպագիր մատենանք, ինչպէս նաեւ թերթեր, կը պահուին իրարմէ անջատ ալիքաւ սենեակներու մէջ, մինչ Դուռեան Սրբազանի պատշարութեան այս ուրը տարիներու ընթացքին հազարաւոր նոր նոր հասորներ աւելցած են եւ կ'աւելնան զերթէ ամէն օր, եւ ատենց համար տեղ կը պակսի .

Գ. — Յոբելեանի հանդէսները դիւրացնելու համար, յարմարագոյն կեդրոններու մէջ պիտի կազմուին Յոբելեանական ժամանակ Յանձնաժողովներ .

Դ. — Յոբելեանի հանդէսները պիտի հռչակուին 1929 Հոկտ. 26, Շր. Նոր տմարով, Քարգմանց տօնին .

Հանդէսներուն մանրամարնութիւնը հեղելու համար Յայտագիր մը պիտի պատրաստուի պատշան ժամանակին եւ պիտի հրատարակուի հայ թերթերու մէջ .

Յոբելեանական կեդրոնական Յանձնաժողովը առ այժմ կը բաւականանայ այս Յայտարարութեամբ եւ կը խնդրէ բոլոր հայ թերթերէն ու հանդէսներէն որ բարեհաճին նոյնութեամբ հրատարակել զայն իրենց սիւնակներուն մէջ .

(*) Սոյն հրատարակելի հասորին վերջը պիտի դրուի Սրբազան Յոբելեարին եկեղեցական թէ աշխարհական աւակներսներուն անուանացանկը . ուստի այս առթիւ կոչ կ'ընենք բոլոր տնոնց, որ աւակներսած են Ն. Բ. Սրբազանութեան, զոով մը հաղորդել կեդրոնական Յանձնաժողովին թէ ե՞րբ աւակներսած են Դուռեանին, ո՞ր դպրոցի մէջ եւ ո՞րտա՞ն տեւած է իրենց աւակներսութեան երջանը :

ՅՈՐԴԱՆԻԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

- | | |
|-------------------------------------|--------------------|
| 1. ԳԵՐ. Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՓԵՊՍ. ԳՈՒՇԱԿԵԱՆ | |
| Առաջնորդ Եպիսկոպոս, | ՊԱՏՈՒԱԿԱՆ, ՆԱԽԱԳԱՀ |
| 2. ԳԵՐ. Տ. ՄԵՍՐՈՊ ԵՊՍ. ՆՇԱՆԵԱՆ | |
| Լուսարարական Ս. Արտիս | ԱՏԵՆԱՊԵՏ |
| 3. ԳԵՐ. Տ. ԲԱՏԳԷՆ ԵՊՍ. ԿԻՒԼԷՍԷՐԵԱՆ | |
| Խմբագրական ՍԻՄՆԻ | ԱՏԵՆԱԳԻՐ |
| 4. ԳԵՐ. Տ. ՄԿՐՏԻԶ ԵՊՍ. ԱՂԱԽՆՈՒՆԻ | |
| Պատրիարկական Փոխանորդ | ԳԱՆՁԱՊԵՏ |
| 5. ԳԵՐ. Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ. ԳԱՅԸԳՃԵԱՆ | |
| Եկեղեցի Տեսուչ | ԻՈՐԴԱՆԻԱԿԱՆ |
| 6. ՀՈԳ. Տ. ԿԻՐԵՂ ՎՐԴ. ԻՍՐԱՅԷԼԵԱՆ | |
| Ներքին Տեսուչ Ժողովրդ. վարժարանին | » |
| 7. ՄԵՄ. ՏԻԱՐ ԿԱՐԱՊԵՏ ՆՈՒՐԵԱՆ | |
| Դիւանական Պատրիարքարանի | » |
| 8. ՄԵՄ. ՏԻԱՐ ԳՐԻԳՈՐ ՄԽԱԼԵԱՆ | |
| Ուսուցիչ Ժողովրդ. վարժարանի | » |

ՆՈՒՆԹՈՒԹԻՒՆ

Ա.— Ամեն. Յոթկեսրի աշակերտներուն և այլոց կողմէն գրուելիք գրութիւնները պիտի և ղրկել ՍԻՄՆԻ հասցեով մինչև 1929 Մայիսի վերջը :

Բ.— Իսկ նոր կառուցանելի Մատենադարանին համար դրամական նպաստ մը ապրիլ յոժարող ազգայիները, կրնան իրենց նուիրելը ղրկել Յոթկիւսկան Կեդրոնական Յանձնաժողովին հասցիին :

COMITÉ CENTRAL DE JUBILÉ TOURIAN

PATRIARCAT ARMÉNIEN

JÉRUSALEM - PALESTINE